ԼՈՂԱԼ ՋՐԵՐԻ ՎՐԱ
FLOAT ON THE WATERS

ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ.

- *ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՆՐԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՆ*

  ՔԱՂԱՔԻ ՄԱՐԴԿ, ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ, ՈՐԲԵՎԱՅՐԻ ԿԻՆԸ, ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ, ՆԵՄԱՆԸ ՋՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ, ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՈՐԴԻՆԵՐԸ:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Դ ԹԱԳԱՎՈՐԱՅ 6:1-7

1 Մարգարեների որդիներն ասացին Եղիսեին. «Այս տեղը, որ մենք բնակվում ենք քո առաջ,
նեղ է մեզ համար: 2 Թող գնանք մինչև Հորդանան, և ամեն մեկս այնտեղից մի գերան
վերցնենք և այնտեղ բնակվելու տեղ շինենք մեզ համար»: Նա ասաց՝ գնացե՛ք: 3 Նրանցից
մեկն ասաց. «Բարեհաճի՛ր դու էլ գնա քո ծառաների հետ»: Եվ նա ասաց. «Ես էլ կգամ»: 4 Եվ
գնաց նրանց հետ: Եկան Հորդանան և կտրում էին ծառերը: 5 Եվ երբ մեկը գերան էր կտրում,
կացնի երկաթը ջուրն ընկավ, և նա բարձր գոչեց ու ասաց. «Վա՜յ, տե՛ր իմ». դա էլ փոխ
առնված էր: 6 Եվ Աստծու մարդն ասաց. «Ո՞ւր ընկավ». և նա տեղը ցույց տվեց նրան: Եղիսեն
մի փայտ կտրեց ու գցեց այնտեղ, և երկաթը լողաց դեպի վեր: 7 Եվ ասաց. «Վերցրո՛ւ դա»:
Նա էլ ձեռքը մեկնեց և վերցրեց այն:

Ահա մի քանի ճշմարտություն այս պատմության մասին:

- *Կացինը դատաստանի խորհրդանիշ է:*
- *Եվ այն (Կացինը) պատրաստված է մետաղից և փայտից ինչպես մեխերն ու խաչը:*
- *Այդ կացնի երկաթը խորտակվեց Հորդանանում:*
- *կացնի երկաթը փոխ առնված էր: Այդպես էլ Հիսուսի գերեզմանը:*
- *Այստեղ նշում է «մարգարեների որդիները», իսկ հավատացյալները մարգարեի՝ Հիսուսի որդիներն ու դուստրերն են:*
- *Խորտակված կացնի երկաթը բարձրացավ, իսկ Հիսուսը գերեզմանից հարություն առավ: Երկու դեպքում էլ պարտքը չեղյալ է համարվեց:*

I. **ՈՐՈՎՀԵՏև ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԵԿԵԼ Է ԿՈՐԱԾԻՆ ՓՆՏՐԵԼՈՒ ՈՒ ՓՐԿԵԼՈՒ: ՂՈՒԿԱՍ 19:10**

- *Նա եկավ կորած ոչխարին գտնելու*
- *Նա եկավ իմ և քո արժեքները վերականգնելու (կորած դրամը)*
- *Նա եկավ որ ասի — որովհետև իմ այս որդին մեռած էր ու կենդանացավ, կորած էր ու գտնվեց: Եվ սկսեցին զվարճանալ: Ղուկաս 15:24*

  Կորած էր և գրեթե ամբողջությամ թաղված որ էլ գրեթե հույս չկար մարդու կողմանե:

II. ԴԵՌ ՀՈՒՅՍ ԿԱ, ԵՐԲ ՄԵՆՔ ԱՂԱՂԱԿՈՒՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ:

Եվ երբ մեկը գերան էր կտրում, կացնի երկաթը ջուրն ընկավ, և նա բարձր գոչեց ու ասաց. «Վա՜յ, տե՛ր իմ».

Այս բառը, որն արտահայտում է ցավը: Ախ՜

Սաղմոս 50.15 Կանչի՛ր ինձ նեղության օրը, ու ես կազատեմ քեզ, և դու կփառաբանես ինձ»:

- *Ամբողջ Աստվածաշնչում իմ ամենասիրած աղոթքներից մեկն այն աղոթքն է, որն աղոթեց Պետրոս առաքյալը, երբ նա նավից դուրս եկավ և ջրի վրա գնաց Տեր Հիսուսին:*

Մատթեոս 14.30 — Սակայն սաստիկ քամին տեսնելով՝ վախեցավ և երբ սկսեց սուզվել, աղաղակեց ու ասաց. «Տե՛ր, փրկի՛ր ինձ»:

Եթե հիմա մենք հրավիրենք Աստծո ներկայությունը մեր կյանքում, ապա ամենալավագույն ձևով կպատրաստվենք գալիք դժվարություններին:

Եվ Աստծու մարդն ասաց. «Ո՞ւր ընկավ». և նա տեղը ցույց տվեց նրան:

III. ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ԴԵՊՔԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Մի պահ եղավ երբ Պետրոս առաքյալը եկավ Հիսուսի մոտ այն ժամանակ, երբ տաճարի հարկի վճարման ժամանակն էր

Մատ. 17.26 - գնա՛ լիճ, կա՛րթ գցիր և դուրս եկած առաջին ձուկը վերցրո՛ւ, բերանը բա՛ց արա և մի սատեր կգտնես: Վերցրո՛ւ այն և նրա՛նց տուր իմ ու քո տեղը»:

Հիշում եք հացի բազմացման մասին: Հիսուսը հարցրեց, թե ինչ ունեն.

IV. ՈՉԻՆՉ ԱՅՆՔԱՆ ՀԶՈՐ, ՉԷ, ՈՐՔԱՆ ՄԵԿ ՀՐԱՇՔ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ:

Եղիսեն մի փայտ կտրեց ու գցեց այնտեղ, և երկաթը լողաց դեպի վեր: Եվ ասաց. «Վերցրո՛ւ դա»: Նա էլ ձեռքը մեկնեց և վերցրեց այն:

Երբևէ նկատե՞լ եք, թե ինչպես է, երբ Տեր Հիսուսը բուժում էր անդամալույծ մարդկանց, Նա սովորաբար ասում էր նրանց.

Մատթեոս 9.6 — "Վե՛ր կաց, մահիճդ ա՛ռ ու քո տո՛ւն գնա":

Հովհաննես 5.8 — Հիսուսը նրան ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր»:

Հաջորդ քայլը:

Ղուկաս 4:24, 27 — Եվ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. ոչ մի մարգարե ընդունելի չէ իր հայրենիքում: Եղիսե մարգարեի ժամանակ Իսրայելում շատ բորոտներ կային, ու նրանցից ոչ ոք չմաքրվեց, բացի Նեեման Ասորուց»: